2023, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (632)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Հունիսի 14-ին

ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի նորընտիր անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի նորընտիր անդամներին՝ առաջնորդությամբ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանի:

Տիար Հակոբ Տեր-Խաչատուրյանը Նորին Սրբությանը ներկայացրեց ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի նորընտիր կազմին:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու շնորհավորանքները բերեց ներկաներին՝ ՀՅԴ Հայաստանի ԳՄ կազմում ընտրվելու կապակցությամբ: Նորին Սրբությունը նկատեց, որ հայրենիքի համար ծանր ժամանակահատվածում են ստանձնում իրենց պատասխանատու առաքելությունը՝ մաղթելով, որ ամենայն նվիրումով ու նախանձախնդրությամբ լծվեն ծառայության՝ ի շահ հայրենիքի եւ ի խնդիր ազգի արժանապատիվ, լուսավոր գալիքի կերտման:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած անվտանգային խնդիրներին, մասնավորապես կարեւորվեց համազգային միասնականության անհրաժեշտությունը, Հայաստան–Արցախ–Սփյուռք գործակցության սերտացումը՝ ի նպաստ առկա մարտահրավերների հաղթահարման եւ հայրենիքի զորացման:

Հունիսի 16-ին

«Մայր Հայաստան» ժողովրդական շարժման նախաձեռնող խմբի անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Մայր Հայաստան» ժողովրդական շարժման նախաձեռնող խմբի անդամներին՝ առաջնորդությամբ շարժման համակարգող Անդրանիկ Թեւանյանի:

Հանդիպմանը տիար Անդրանիկ Թեւանյանը Նորին Սրբությանը ներկայացրեց շարժման ձեւավորման պատճառները եւ Հայաստանի ու Արցախի առջեւ ծառացած արտաքին եւ ներքին մարտահրավերների հաղթահարման ուղիների վերաբերյալ տեսլականը:

Այնուհետեւ ներկաներին իր հայրական օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ առկա հիմնախնդիրների դիմագրավման գործում կարեւորելով ազգային միասնությունն ու միաբանությունը: Նորին Սրբությունը նման նախաձեռնությունները նկատեց երկրում տիրող իրավիճակի շուրջ խոր անհանգստությունների եւ մտահոգության ուղղակի արտահայտությունը: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցին պիտի շարունակի ջանքեր գործադրել՝ համազգային ներուժի համախմբմամբ հայրենիքը փորձություններից դուրս բերելու եւ մեր ժողովրդի զավակների հոգիներում ամրապնդելու ապագայի հանդեպ հույսն ու լավատեսությունը: Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայաստանի եւ Արցախի անվտանգային խնդիրներին, հասարակության բարոյահոգեբանական վիճակին, Եկեղեցի–պետություն հարաբերություններին, Արցախի ժողովրդին ցուցաբերվող օգնությանը եւ Արցախի թեմի գործունեությանը:

Հունիսի 18-ին

Դետրոյթի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու համայնքի անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ արեւելյան հայոց թեմի՝ Դետրոյթի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու համայնքի անդամներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբան Տ. Փառեն արք. Ավետիքյանի:

Փառեն սրբազանը, Նորին Սրբությանը ներկայացնելով ուխտավոր հայորդիներին, ընդգծեց, որ տասնյոթ տարի շարունակ Դետրոյթի հայ համայնքի ներկայացուցիչները հովանավորում եւ կամավորական աշխատանքներ են իրականացնում Հայաստանի մարզերում՝ ավարտին հասցնելով կիսակառույց տների շինարարական աշխատանքները:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունը բերելով ուխտավոր հայորդիներին, կարեւորեց վերջիններիս աջակցությունը՝ ուղղված մարզի բնակիչների կյանքի բարելավմանը: Ամենայն Հայոց Հայրապետն ընդգծեց, որ հայրենիքի համար այս դժվարին օրերին սփյուռքի հայորդիների ցուցաբերած զորակցությունը հույս եւ լավատեսություն է ներշնչում Հայաստանում ապրող հայ ժողովրդի զավակներին:

Վեհափառ Հայրապետը, գնահատելով նաեւ հավատավոր հայորդիների ծառայանվիրումի եւ պատրաստակամության ոգին, հորդորեց, հավատարիմ տերունավանդ պատվիրաններին, մշտապես իրենց կարողություններն ու հմտություններն ի սպաս դնել հայրենիքի զորացմանն ու շենացմանը:

Հունիսի 20-ին

ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի շրջանավարտ ուսանողներին եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի շրջանավարտ ուսանողներին եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ գլխավորությամբ ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանի:

Տիար Մելքոնյանը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ներկայացրեց ֆակուլտետի այս տարվա ձեռքբերումները եւ ընդգծեց, որ շրջանավարտ ուսանողներն իրենց ստացած գիտելիքներով օգտաշատ ծառայություն կմատուցեն հայրենի պետությանը եւ հայ ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շնորհավորելով շրջանավարտներին, մաղթեց նրանց արդյունավոր գործունեություն եւ նորանոր հաջողություններ: ➥ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի շրջանավարտ ուսանողներին...

➥ էջ 1

Վեհափառ Հայրապետը ներկաներին շնորհավորեց նաեւ Արեւելագիտության ֆակուլտետի հիմնադրման 55-ամյակի առիթով՝ կարեւոր նկատելով ֆակուլտետի առաքելությունը հարեւան ժողովուրդների եւ երկրների անցյալի, ներկայի, մշակութային ժառանգության ու հայ ժողովրդի հետ առնչությունների ուսումնասիրության ուղղությամբ մասնագետների պատրաստման գործում:

Հայոց Հովվապետը գոհունակությամբ արձանագրեց, որ Արեւելագիտության ֆակուլտետում ուսում եւ կրթություն ստացած շրջանավարտները կարեւոր ներդրում են ունեցել պետականաշինության եւ Մերձավոր Արեւելքի շատ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների արդյունավորման եւ բարիդրացիական կապերի ձեւավորման գործում: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ֆակուլտետի շրջանավարտներին հայրենասիրական ոգով, ազգային արժեքների նկատմամբ մեծագույն նախանձախնդրությամբ, գիտական նոր ուսումնասիրություններով իրենց մասնագիտության շրջանակներում նպաստել հայրենիքի զարգացմանն ու առաջընթացին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց Մայր Աթոռի եւ Արեւելագիտության ֆակուլտետի միջեւ առկա փոխգործակցությանը՝ ընդգծելով, որ ֆակուլտետի շրջանավարտները դասավանդել են նաեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, ինչը եւս կապեր է ձեւավորել ապագա եկեղեցականների եւ արեւելագետ երիտասարդների միջեւ:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց շրջանավարտների հարցերին, որոնք վերաբերում էին Ադրբեջանի վերահասկողության տակ անցած հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության եւ համաշխարհայնացման պայմաններում ազգային ինքնության պահպանմանն ուղղված Մայր Աթոռի ջանքերին, ինչպես նաեւ հայ-իրանական հարաբերություններում Հայ Եկեղեցու դերակատարությանը:

Հունիսի 21-ին **ԵԽ պատգամավորին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպական խորհրդարանի Նիդեռլանդացի պատգամավոր Բերտ-Յան Ռուիսենին:

Հանդիպմանը, ի դեմս պատգամավոր Բերտ-Յան Ռուիսենի, Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց Նիդեռլանդների խորհրդարանին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ Լաչինի միջանցքի արգելափակումը դատապարտող բանաձեւերի ընդունման համար:

Անդրադառնալով Արցախի շրջափակմանը եւ դրա հետեւանքով ստեղծված աղետալի իրավիճակին, ինչպես նաեւ հայկական հոգեւոր, մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին՝ Հայոց Հովվապետը կարեւորեց միջազգային հանրության հստակ ու հետեւողական քայլերի գործադրումն ադրբեջանական ագրեսիայի կանխման եւ արցախահայության առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ:

Վեհափառ Հայրապետը նաեւ իր գնահատանքը բերեց ԵԽ Նիդեռլանդացի պատգամավոր Բերտ-Յան Ռուիսենին՝ քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության գործում ներդրած ջանքերի համար:

Պատգամավոր Բերտ-Յան Ռուիսենը, դատապարտելով Ադրբեջանի որդեգրած ծավալապաշտական քաղաքականությունը, պատրաստակամություն հայտնեց աջակցություն ցուցաբերելու Հայաստանի ու Արցախի անվտանգության եւ հոգեւոր, մշակութային ժառանգության պահպանման խնդիրների դիմագրավման հարցում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Նիդեռլանդների հայկական համայնքի գործունեությանը, ինչպես նաեւ քույր եկեղեցիների հետ առկա գործակցությանը:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Քրիստինե Վայգանդին:

Հանդիպմանը Քրիստինե Վայգանդը Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց նախադպրոցական եւ դպրոցական տարիքի, խոցելի խմբերի երեխաների պաշտպանության, առողջապահության ու կրթության, ինչպես նաեւ հանրակրթության ոլորտի բարեփոխումների ուղղությամբ գրասենյակի կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ: Նա նաեւ կարեւորեց Եկեղեցու աջակցությունն այդ հարցերում:

Նորին Սրբությունը, իր գնահատանքը բերելով Քրիստինե Վայգանդին, ընդգծեց, որ նախանշված ոլորտներում Եկեղեցին եւս հետեւողականորեն իրականացնում է իր առաքելությունը՝ նպաստելով երեխաների խնամքի, կրթության, դաստիարակության եւ խոցելի խմբերի սոցիալական խնդիրների հաղթահարման գործին: Այս առիթով Հայոց Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցու հովանու ներքո գործում են հայորդյաց տներ, կիրակնօրյա դպրոցներ, երեխաների խնամքի կենտրոններ, երիտասարդական կառույցներ, որոնք իրականացնում են հոգեխնամ, կրթադաստիարակչական առաքելություն:

Հիշյալ ոլորտներում երեխաների հետ իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ Հայոց Հովվապետը կարեւոր նկատեց Եկեղեցու եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի միջեւ սերտ փոխգործակցությունը:

Հունիսի 22-ին **Զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն պատերազմից տուժած ընտանիքներին» ծրագրի շրջանակներում արցախյան 44-օրյա պատերազմի եւ Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ ոտնձգությունների հետեւանքով զոհված, գերեվարված զինծառայողների ընտանիքների անդամներին:



Հանդիպման սկզբում Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթք բարձրացրեց հայրենյաց քաջարի պաշտպանների հոգիների խաղաղության համար: Այնուհետեւ ԵՀԽ-ի հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամը, Մասյացոտն թեմի հոգեւոր դասի հետ համագործակցաբար նյութական, բարոյական ու հոգեխնամ աջակցություն է ցուցաբերում որդեկորույս ընտանիքներին: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել ինչպես Արարատի, այնպես էլ Գեղարքունիքի ու Սյունիքի մարզերում, որի շրջանակներում աջակցություն կտրամադրվի 50 ընտանիքի:

Հայոց Հայրապետը, սրտակցություն հայտնելով որդեկորույս ընտանիքներին, իր խոնարհումը բերեց քաջարի նահատակներին, որոնք հանուն հայրենիքի գոյատեւման՝ ընծայաբերեցին ամենաթանկը՝ իրենց կյանքը: Այս առնչությամբ Հայոց Հովվապետը նշեց, որ հերոս զավակների քաջության օրինակն առաջնորդելու է հայորդիներին՝ քաջարի ոգով շարունակելու տեր լինել իրենց երկրին, ազատ ու անկախ ապրելու իրավունքին:

Վերջում, ի պատասխան զոհված զինծառայողների ընտանիքների անդամների հարցերի, Նորին Սրբությունն անդրադարձավ պատերազմում անհայտ կորած զինվորականների հայտնաբերման եւ ռազմագերիների վերադարձման ուղղությամբ Հայ Եկեղեցու կողմից կատարված ու կատարվող աշխատանքներին:

ՀՀ-ում Իրանի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրիին:



Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ դեսպանի՝ Հայաստանում իրականացրած ծառայությանը՝ գնահատելով հայ ժողովրդի եւ Հայոց Եկեղեցու հանդեպ դրսեւորած նրա ազնիվ վերաբերմունքը: Նորին Սրբությունը, ի դեմս դեսպանի, շնորհակալություն հայտնեց Իրանի Իսլամական Հանրապետությանը՝ դժվարին այս ժամանակաշրջանում Հայաստանին ցուցաբերվող զորակցության համար:

Իր հերթին դեսպան Աբբաս Բադախշան Զոհուրին, Նորին Սրբությանը ներկայացնելով Հայաստանում իր ծառայության տարիների արդյունքներն ու ձեռքբերումները, վստահություն հայտնեց, որ երկու երկրների միջեւ առկա ջերմ ու բարեկամական հարաբերությունները կշարունակեն առավել զորանալ ու արդյունավորվել: Անդրադարձ կատարելով տարածաշրջանային իրավիճակին՝ դեսպանը կարեւորեց հակամարտությունների խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը: Պարոն Աբբաս Բադախշան Զոհուրին փաստեց նաեւ, որ Իրանի համար շատ կարեւոր է, ի դեմս Հայաստանի, ունենալ հզոր եւ տնտեսապես զարգացած հարեւան:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ դեսպանը անդրադարձան մարդկային կյանքում հոգեւոր, բարոյական արժեքների զորացմանը, ինչը կնպաստի ավելի բարի, ապահով ու խաղաղ դարձնելու աշխարհը: Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Իրանի հայ համայնքի հոգեւոր կյանքին:

Վերջում Նորին Սրբությունը դեսպանին մաղթեց նորանոր հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2022–2023 ուսումնական տարվա փակումը

Հունիսի 30-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ճեմարանի՝ 2022–2023 ուսումնական տարվա փակման հանդիսությունը:

Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին ՀՀ եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի օրհներգերը:

Այնուհետեւ ներկաներին ողջունեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսուչ Տ. Շահե ծ. վրդ. Անանյանը:

Հայր սուրբը, անդրադառնալով ճեմարանի ուսումնական անցած տարվան, ընդգծեց, որ ճեմարանն անմասն չմնաց հայրենիքին ու հայ ժողովրդին փոթորկող հույզերից ու մարտահրավերներից. աղոթեց, որ Փրկիչն Իր ամենախնամ Աջի ներքո պահի Հայոց եկեղեցին եւ հավատավոր հայ ժողովրդի զավակներին՝ հեռու ամեն չարից ու փորձություններից:

«Հիրավի, մեկուկես դար շարունակ հույսով եւ ապագայի վառ տեսիլքով փայլող ճեմարանն այլ կերպ չի էլ կարող գոյել. ճեմարանի եւ ճեմարանականների համար չհավատալ հույսի ու սիրո հաղթանակին նշանակում է անհավատարիմ լինել այն մեծ ու փառապանծ ավանդին, որ 1874 թվականից եւ դեռ դրանից էլ առաջ մեզ են հանձնել մաղաքիաօրմանյանները, կոմիտասները, կարապետտեր-մկրտչյանները, գեւորգչորեքչյանները, գարեգինհովսեփյանները եւ դեռ շատ ու շատ մեծանուն ճեմարանականներ՝ ընդհուպ մինչեւ մեր օրեր... Չհուսալ եւ չհավատալ, որ այս նշանավոր անունները կրկին ծնունդ են առնելու եւ մարմնանալու ճեմարանի սաների մեջ, կնշանակի թողնել հոգեւոր արթնության եւ զգոնության խրամատը՝ թիկունք դարձնելով թշնամուն ու փախչելով տիրավանդ առաքելությունից: Չէ՞ որ պատվեր ունենք Սուրբ Պողոս առաքյալից. «Զհոգին մի՛ շիջուցանէք» (Ա Թես. Ե 19)»,– ասաց հայր Շահեն՝ հավելելով նաեւ, որ ճեմարան ոտք դրած սանը մեծ տեսիլքի զավակն է, այն նույն տեսիլքի, որով մեր հավատի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը կերտեց Սրբություն Սրբոց Էջմիածինը, Սուրբ Սահակն ու Սուրբ Մեսրոպը հայատառ դարձրին Աստվածաշունչը՝ լուսավորելով հայոց սրտերն ու մտքերը, Սուրբ Վարդանանք նահատակաց արյունով ներկեցին հայոց հերոսամարտերի գրքի առաջին էջերը, մեծանուն ու քրիստոսասեր թագավորները զորացրին ու շենացրին մեր հայրենիքը, աստվածուսույց վարդապետները երկնեցին մեր անգին ձեռագիր մատյանները, լուսավորչաշավիղ մեր հայրապետներն առաջնորդեցին հայ ժողովրդին հոգեւոր ու մարմնավոր պատերազմներում:

Իր խոսքում տեսուչ հայր սուրբը բարի եւ օրհնյալ ծառայություն մաղթեց ճեմարանի շրջանավարտ սարկավագներին՝ հայցելով, որ Աստծու ամենախնամ Աջը միշտ ուղղորդի եւ նրանց մեջ պահի առաքելական քարոզչության նախանձախնդրությունը, հոգեւոր մշակի աննահանջ աշխատասիրությունը եւ սերը Աստծու, Սուրբ Եկեղեցու եւ հայ ժողովրդի նկատմամբ:

Վերջում հայր սուրբն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ ճեմարանի նկատմամբ ցուցաբերվող հայրական հոգածության եւ ուշադրության համար, ինչպես նաեւ ճեմարանի տեսչության անունից շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռի միաբանությանը, ճեմարանի ուսուցչական-դասախոսական կազմին՝ իրենց նվիրյալ աշխատանքի ու ճեմարանի հանդեպ ցուցաբերած պատասխանատու եւ գիտակից վերաբերմունքի համար:

Ապա հոգեւոր, ազգային երգերի կատարումներով եւ ասմունքով հանդես եկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբն ու սաները:

Դասախոսների անունից ներկաներին իր խոսքն ուղղեց բ. գ. թ., դոցենտ Լաուրա Ավագյանը, իսկ ուսանողների՝ ավարտական Ձ լսարանի սան Գեւորգ սրկ. Մկրտչյանը:

Հանդիսության ընթացքում տեղի ունեցավ ՀՀ ԶՈՒ գնդերեց եւ արցախյան 44-օրյա պատերազմում հերոսաբար զոհված Նարեկ սրկ. Պետրոսյանի անվան մրցանակաբաշխություն: Եկեղեցու սոցիալական ծառայության լավագույն ծրագրերի ներկայացման համար խրախուսանքի արժանացան մի շարք ճեմարանականներ:

Կատարվեց նաեւ գեղեցիկ ավանդույթ դարձած նվիրաբաշխությունը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանի ձեռամբ ուսման մեջ բարձր առաջադիմություն արձանագրած՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի եւ Քահանայից պատրաստման լսարանի ուսանողներին հանձնվեցին պարգեւներ:

Միջոցառման վերջում ներկաներին իր հայրական պատգամն ու օրհնությունը բերեց Նաթան սրբազանը:

Սրբազան հայրը, ներկաներին փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական սերն ու օրհնությունը, ընդգծեց, որ ճեմարանում թրծվում է հոգեւոր Հայաստանի վաղվա սերունդը, հայ հոգու ինքնության պահապանը: Նաթան սրբազանը նաեւ իր գնահատանքն ու երախտագիտությունը հայտնեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի, Քահանայից պատրաստման լսարանի տեսչական անձնակազմերին եւ դասախոսներին, որոնք ամենայն ջանք ի գործ են դնում լավագույն կրթություն ապահովելու ուսանողների համար:

Շրջանավարտ սարկավագներին սրբազան հայրը հորդորեց հարատեւ զինվել գիտելիքներով, որպեսզի կարողանան երկնային կյանքը երկրի վրա հնարավոր դարձնել եւ պայքարել հանուն քրիստոնեական սուրբ հավատքի:

Հանդիսությունը եզրափակվեց Նաթան սրբազանի Պահպանիչ աղոթքով: 2022–2023 ուսումնական տարում ճեմարանն ավարտեց 19 սան:

Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի գլխավոր համագումար

Հունիսի 14-ին Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում իր աշխատանքներն սկսեց Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի (ԵԵԿ) գլխավոր համագումարը՝ «Աստծու օրհնության ներքո կերտելով ապագան» խորագրով:

Համագումարը հյուրընկալել էին Էստոնիայի Ավետարանական Լյութերական եւ Էստոնիայի Ուղղափառ Եկեղեցիները:

Համագումարը համախմբում է ԵԵԿ անդամ Եկեղեցիների ներկայացուցիչներին, գործընկեր կազմակերպություններին եւ Եվրոպական Եկեղեցիների ազգային խորհուրդներին: Այն տեղի է ունենում հինգ տարին մեկ՝ Եվրոպայի Եկեղեցիների կոնֆերանսի ապագա ծրագրերի վերաբերյալ որոշումներ կայացնելու առաքելությամբ: Համագումարի ընթացքում կընտրվեն նաեւ խորհրդի նոր անդամներ, որոնք կղեկավարեն ԵԵԿ առաքելությունն առաջիկա հինգ տարիների ընթացքում:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ԵԵԿ գլխավոր համագումարին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացնում էին Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը, Բալթյան երկրների հայոց թեմի առաջնորդ Տ. Վարդան եպս. Նավասարդյանը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական կենտրոնի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Հայրապետական այց Հնդկաստան եւ Թայլանդ

Հունիսի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական մեկշաբաթյա այցով մեկնեց Հնդկաստան եւ Թայլանդ:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնի տնօրեն:

Տ. Տարոն վրդ. Ղուլիկյանը, ազատվելով Ուկրաինայի հայոց թեմում իր ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում:

Տ. Ներսեհ վրդ. Խալաթյանը ծառայության է կոչվել Կոտայքի թեմում:

Տ. Մինաս աբղ. Հախվերդյանը, ազատվելով Քահանայից պատրաստման լսարանի տեսչի պաշտոնից, ծառայության է կոչվել Ուկրաինայի հայոց թեմում:

Տ. Աղան աբղ. Երնջակյանը ծառայության է կոչվել Գուգարաց թեմում:

Կարգալույծ է հռչակվել Տ. Սեդրակ քհն. Աղասյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մասյացոտնի թեմի հոգեւոր սպասավոր Տ. Սեդրակ քհն. Աղասյանը:

Տնօրինության համար հիմք է ծառայել Մասյացոտնի թեմի առաջնորդ Տ. Գեւորգ եպս. Սարոյանի միջնորդությունը եւ կարգապահական հանձնախմբի եզրակացությունը Տ. Սեդրակ քահանայի կանոնազանց ընթացքի վերաբերյալ:

Կարգալույծ եկեղեցականը դասվում է աշխարհականների շարքին՝ Հրանտ Աղասյան ավազանի անունով:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

✠ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ

Գարեգին Ա կաթողիկոսի հայրապետության շրջան (1995–1999 թթ.)

1996 թ. սեպտեմբերի 8-ին, ձեռամբ Գարեգին Ա Սարգիսյան կաթողիկոսի (1995–1999 թթ.), կատարվեց երկրորդ հազարամյակի՝ մյուռոնի վերջին օրհնությունը: Հայոց հայրապետն այդ օրվա օրհնած մյուռոնն անվանել է «Վերածննդյան մյուռոն»: Ներկա էր աշխարհասփյուռ հայության ավելի քան 15 000 հավատացյալ: Օրվա ընթացքում սրբալույս մյուռոնի կաթսան համբուրելու եւ իրենց ուխտը վերանորոգելու համար Սուրբ Աթոռ էին այցելել 40 000-ից ավելի հավատացյալ եւ ուխտավոր (տես *Թ. Գեղամյան*, Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռքով օրհնվեց «Վերածննդյան մյուռոնը», «Էջմիածին», 1996, Թ, էջ 34): Մյուռոնօրհնության ավարտին Վեհափառ Հայրապետն իր հայրապետական պատգամը հղեց հավատացյալներին: Անդրադառնալով նահատակ Խորեն Ա Մուրադբեկյանի (1932–1938 թթ.) աճյունի՝ Ս. Գայանե վանքից Մայր տաճարի բակ տեղափոխության արարողությանը՝ Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ իր անդրանիկ մյուռոնօրհնությունը՝ «*...որպէս խունկ բուրումնաւէտ*», ընծայում է նրա պայծառ եւ ճաճանչող հիշատակին (անդ, էջ 33):

Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

ՅԱԿՈԲ ԴԱՏՐԻԱՐՔ ՆԱԼԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

Սկիզբը՝ թիվ 9–11

Հաւատքի աստիճաններուն մեկնութիւնը

Գ.

Երրորդ աստիճանը՝ Սուրբ Հոգիէն յղացաւ եւ Կոյս Մարիամէն ծնաւ, որ Յակոբոս առաքեալն ըսաւ:

Առաքեալն այս աստիճանով կ'ուսուցանէ մեզի, թէ անմարմին Բանն Աստուած մեզ փրկելու համար Հօր եւ Սուրբ Հոգիին հաճութեամբ՝ Գաբրիէլ հրեշտակապետին աւետիսով՝ Կոյս Մարիամ Աստուածածինին արգանդին մէջ իջաւ: Քու մէջդ իջած ատեն, առանց ժամանակի՝ անմիջապէս քեզմէ աչք բանալն ու գոցելը, Սուրբ Կոյսէն արիւն առնելը, Սուրբ Հոգիի կարողութենէն ձեւանալը, հոգի առնելը, միանալն ու աստուածանալը նոյն ատեն եղան, ու անոնց մէջ երբեք ժամանակի տարբերութիւն չեղաւ:

Ինչպէս կրակը վառօդին դպնալուն պէս անմիջապէս կը վառի, այսպէս ալ Բանն Աստուած Քեզմէ Սուրբ Կոյսին որովայնին մէջ իջած պահուն իսկ բոլոր անդամներով կատարեալ դարձաւ, թէեւ փոքրիկ, սակայն զօրաւոր աչքով կը տեսնուէր:

Ասիկա մեծ զարմանք էր, որ անբովանդակելի Աստուած Իր անհուն Աստուածութեամբ այսքան փոքրութեան մէջ պարագրուեցաւ եւ կատարեալ մարդ եղաւ, որ կատարեալ Աստուած էր:

Երկրորդ՝ կսովրեցնէ մեզի, թէ նոյն Բանն Աստուած Կոյսին արգանդին մէջ յղացուեցաւ 7 ապրիլին, այդ Սուրբ Մօրմէն ծնաւ 6 յունուարին Բեթղեհէմ քաղաքին մէջ՝ անբաններու մսուրին մէջ:

Այս եւս գիտելի է, որ կինը մը ծննդաբերութեան ատեն շատ պակասութեան կը հանդիպի.

Նախ՝ կուսութիւնը կ'ապականի. Սուրբ Աստուածածինը յղացաւ ու կոյս մնաց:

Երկրորդ՝ [ոեւէ մէկ մայր] քառասուն օր [իբրեւ] մեռելակիր կը շրջի՝ առանց տղայի հոգիին. [սակայն, Սուրբ Կոյսը] զՔրիստոս երբ յղացաւ, նոյն պահուն իսկ [իր արգանդին մէջի պտուղը] հոգեւորեցաւ (այսինքն՝ հոգի առաւ), եւ Սուրբ Կոյսը մեռելակիր չեղաւ:

Երրորդ՝ երեխան ինչքան մեծնայ մօր որովայնին մէջ, մայրն այդքան կը ծանրանայ, սակայն Սուրբ Աստուածածինը երբեք չծանրացաւ, այլ թեթեւ կերպով շարժելով ու խնդութեամբ լեռնակողմը գնաց՝ Եղիսաբէթին՝ Յովհաննէս Մկրտիչին մօր մօտ:

Չորրորդ՝ ծննդաբերութեան ժամանակ երեխային խեղճ մօր ցաւերը կը բռնեն, ըստ աստուածային վճիռին, թէ՝ ցաւով ու տրտմութեամբ զաւակ ծնիս. իսկ Սուրբ Աստուածածինը բնաւ ցաւ չկրեց զՔրիստոս ծնած ժամանակ, ինչպէս Եսայի մարգարէն ըսաւ, թէ՝ մինչեւ յղին երկունքը հասնիլն ու մինչեւ անոր ծննդաբերութեան ցաւերուն բռնելը՝ [բնական կերպով] ապրեցաւ ու արու զաւակ ծնաւ:

Հինգերորդ՝ ծնող մայրը դայեակի կը կարօտի, իսկ Սուրբ Աստուածածինն առանց դայեակի ծնաւ իր Որդին ու իր ձեռքով խանձարուրին մէջ փաթթեց եւ անբաններու մսուրին մէջ դրաւ:

Վեցերորդ՝ մայր մը, որ զաւակ կը ծնի, իր կուսական գեղեցկութենէն կը թառամի եւ կը թօշնի. իսկ Սուրբ Աստուածածինը գեղեցկութեամբ անթառամելի մնաց. որովհետեւ ինչպէս կուսութիւնն անթառամ մնաց, այդպէս ալ գեղեցկութիւնն անթառամ մնաց: Այդ պատճառով Սուրբ Եկեղեցին Սուրբ Կոյսն անթառամ ծաղիկ կը կոչէ:

Որովհետեւ Մովսէս, որ հուրի կերպարանքով զԱստուած տեսաւ եւ ո՛չ թէ էութիւնը տեսաւ, մինչեւ մահ՝ անոր երեսը չթառամեցաւ, ու աչքերն ալ չտկարացան, ապա ինչքա՜ն աւելի Տիրամայր Սուրբ Աստուածածինը, որ [զԱստուած] ինն ամիս իր արգանդին մէջ կրեց, իր գիրկին մէջ առաւ, կուրծքերով դիեցուց, աչքերով տեսաւ, ականջներով Անոր ձայնը լսեց եւ իր շրթունքներով համբուրեց. այդ պատճառով մինչեւ մահուան օրն այդ կուսական գեղեցկութեամբ մնաց:

Եօթներորդ՝ կիները երեխայ ծնելէն ետք իրենց ծիծերը կը կախուին, սակայն Սուրբ Աստուածածինին մեղրածորան ստինքները անթառամ մնացին ու երբեք չկախուեցան. տակաւին՝ աղջկայ մը կուսութիւնը երբ ապականի, ապա ստինքները կը կախուին, բայց Սուրբ Աստուածածինին կուսութիւնն անխախտ մնաց, այդ պատճառով ալ ստինքներն ալ անխախտ մնացին ու չկախուեցան:

Սուրբ Յակոբոս պղնձագոյն, կարմիր սիրով հրագոյն,

Բանը Սուրբ Հոգիէն յղացուելով, Սրբուհիէն ծնաւ կ'ըսէ:

Դ.

Այս էր չորրորդ աստիճանը. *Պիղատոս Պոնտացիի հրամանով չարչարուեցաւ, խաչուելով մեռաւ ու թաղուեցաւ,* որ Սուրբ Անդրէաս առաքեալն ըսաւ:

Այս աստիճանով չորս կերպով կսովրեցնէ մեզի Քրիստոսի անհուն սէրը:

Նախ՝ կ'իմացնէ Քրիստոսի մարմինով չարչարուիլը, որովհետեւ մարդուն մեղքը Աստուծոյ անհուն բարութեան դէմ էր, այդ պատճառով ալ այդ մեղքը անհուն էր, ու անհուն պատիժի կը կարօտէր, քանի որ Ադամն ու Եւան աստուածանալ կամեցան եւ դրախտէն ինկան ու Աստուծոյ տեսութենէն զրկուեցան: Սակայն այդ մեղքը չկրցաւ Աստուծոյ բարութեան յաղթել. այդ պատճառով Բանն Աստուած եկաւ, մարմին առաւ եւ նոյն այդ մարմինով չարչարուեցաւ ու մեր անհուն մեղքերուն համար անհուն դեղ ու գին եղաւ: Եւ մարդը, որ աստուածանալ ցանկաց ու չկրցաւ, Ինք մարդ եղաւ եւ զայն աստուածածուց Իր մարմինին մէջ. տակաւին՝ անոր համար անհուն դեղ կազմեց Իր չարչարանքը ու Իր մարմինը եւ արիւնն ու Իր չարչարանքներով վերստին դարձուց մոլորեալ մարդն իր առաջին ցանկացած տեղը ու առաջին վիճակին հասցուց:

Երկրորդ՝ զանազան կերպերով Քրիստոս Իր սէրը ցոյց տուաւ, որ կամաւորաբար խաչուեցաւ:

Նախ՝ փայտին վրայ խաչուեցաւ՝ ձեռքերէն ու ոտքերէն:

Երկրորդ՝ հայհոյողներու չար լեզուէն խաչուեցաւ:

Երրորդ՝ սիրելիներէն խաչուեցաւ, այսինքն՝ ուրացող աշակերտէն՝ մատնիչ Յուդայէն, ինչպէս նաեւ փախչող առաքեալներէն, որոնք Գառնուկը գայլերուն բերանը ձգեցին ու փախան:

Չորրորդ՝ բերանէն խաչուեցաւ, որ լեղի ու քացախ ըմպեց:

Հինգերորդ՝ գլուխէն խաչուեցաւ՝ փուշէ պսակով:

Վեցերորդ՝ աչքէն խաչուեցաւ, մեր մեղքերուն համար արցունք թափելով:

Եօթներորդ՝ սիրտի խիստ կսկիծով խաչուեցաւ՝ ի սէր Իր մօր, որ խաչին դիմաց կանգնած էր:

Ութերորդ՝ կողէն խաչուեցաւ գեղարդով:

Իններորդ՝ սիրտէն խաչուեցաւ մեղաւորներուն նկատմամբ ունեցած անճառելի սիրով, որ այնքան սիրեց, որ նոյնիսկ անոնց համար մեռաւ:

Տասներորդ՝ լեզուագար չար քահանաներէն, դպիրներէն ու փարիսեցիներէն խաչուեցաւ, որոնք Անոր մահանալէն ետք իսկ չխնայեցին զԻնք, այլ մոլորեցուցիչ կոչեցին, եւ այդպիսին են բոլոր այն մարդիկը, որոնք մեռելները կը բամբասեն:

Երրորդ՝ Սուրբ Անդրէասը կսովրեցնէ մեզի Քրիստոսի անհուն սէրը Անոր մահանալէն, որ բաւարար չհամարելով այդքան չարչարուիլը, տակաւին, Իր սուրբ ու անարատ հոգին [որպէս] ընծայ աւանդեց Հօր Աստուծոյ ձեռքերուն մէջ՝ բոլոր մարդոց հոգիներուն փոխարէն:

Այս եւս լաւ իմացիր, որ թէեւ Քրիստոսի բանական հոգին մարմինէն բաժնուեցաւ, սակայն Աստուածութիւնը հոգիին ու մարմինին հետ անբաժանելի մնաց: Ինչպէս որ աղեղի մը թելը երբ մէջտեղէն կտրես, այդ կտրուած թելի (երկու մասերը) աղեղին երկու ծայրէն անբաժանելի կը մնայ [նոյն կերպով նայէ Աստուածութեան]. արդարեւ, աղեղին փայտը Աստուածութեան օրինակն է, իսկ կտրած թելը՝ հոգիին ու մարմինին, որ փայտին երկու ծայրէն, այսինքն՝ Աստուածութենէն անքակտելի մնացին:

Բանական հոգիով ու Աստուածութեամբ դժոխք իջաւ, եւ Աստուածութեամբ ու մարմինով գերեզմանին մէջ էր:

Չորրորդ՝ Սուրբ Անդրէասը կսովրեցնէ մեզի Քրիստոսի անհուն սէրը Անոր թաղումէն: Արդ, Քրիստոս զանազան կերպերով թաղուեցաւ.

Նախ՝ Հին Օրէնքին մէջ թաղուած էր՝ օրինակով ու մարգարէութեամբ:

Երկրորդ՝ Հօր ծոցին մէջ թաղուած էր՝ էութեամբ ու Աստուածութեամբ, ինչպէս նաեւ այժմ:

Երրորդ՝ ինն ամիս Սուրբ Կոյսին արգանդին մէջ թաղուեցաւ:

Չորրորդ՝ Աւագ հինգշաբթի օր առաքեալներուն սիրտին մէջ թաղուեցաւ:

Հինգերորդ՝ Յովսէփ Արիմաթացիին ու Նիկոդիմոսին կողմէ նոր գերեզմանի մը մէջ թաղուեցաւ:

Սուրբ Անդրէաս կանաչ զմրուխտ, խաչն ու թաղումը անթառամ՝

Մեզի փրկութեան նիւթ կը ցուցնէ, միշտ ու անդադար խոկալու:

Շարունակելի

Փոխադրութիւնը՝
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ

Խադավանք

Միջնադարյան Հայաստանի նշանավոր կոթողներից է Խադավանքը, որը կրում է հայկական ճարտարապետության ու եկեղեցաշինության ուրույն եւ անշփոթելի դրոշմը: Խադավանքը բացառիկ է ոչ միայն իր ճարտարապետական հորինվածքով, այլ նաեւ հայտնի է որպես հայ գրավոր մշակույթի ու գրչության հնագույն կենտրոն, որտեղ ընդօրինակվել, ծաղկազարդվել ու պահպանվել են պատմական, մեկնողական, փիլիսոփայական, ծիսական, կրոնական բազմաթիվ ձեռագիր մատյաններ:

Վանական համալիրը գտնվում է Արցախի Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից արեւմուտք՝ Դադիվանքից հարավ-արեւելք՝ Թարթառ գետի աջ ափին:

Թադեոս առաքյալի 70 աշակերտներից մեկը՝ Խադ (Խաթ) եպիսկոպոսը, Սուրբ Եղիշե առաքյալի հետ քրիստոնեություն տարածողներից էր Արցախում եւ Սյունիքում, որի պատվին էլ եկեղեցին կոչվել է Խադավանք (Խաթավանք), որ երբեմն անվանում են նաեւ Խաթրավանք:

Կառույցի զգալի մասը ԺԲ դարում ավերվել է երկրաշարժից, իսկ հետո մասամբ կործանվել ասպատակիչ արշավանքներից սելջուկ թուրքերի (1143 թ.), որոնք Չոլի ամիրայի գլխավորությամբ Պարսկաստանի կողմից ներխուժելով՝ ապստամբած արցախցիներից վրեժխնդիր եղան՝ ավերելով սրբազան վանքերն ու եկեղեցիները եւ գերեվարելով սրբությունները:

Արցախ-Խաչենում Առանշահիկ նախարարական-իշխանական տունը ԺԲ դարի երկրորդ կեսին բաժանվել էր երեք ճյուղի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հոգեւոր-մշակութային կենտրոնը, իշխանանիստը: Ներքին Խաչենի իշխանանիստ կենտրոնը Խոխանաբերդն էր, իսկ հոգեւոր կենտրոնը՝ Գանձասարը: Կենտրոնական Խաչենի իշխանանիստը Հաթերքն էր, իսկ հոգեւոր կենտրոնը՝ Դադիվանքը: Վերին Խաչենի կամ Ծարի իշխանանիստ կենտրոնը Ծար գյուղաքաղաքն էր, իսկ հոգեւոր կենտրոնը՝ Խադավանքը:

ԺԳ դարի առաջին կեսին՝ Վախթանգ իշխանի մահից հետո, Հաթերքի իշխանությունը բաժանվում է հաթերքցիների ու ծարեցիների միջեւ, հարդյունս որի՝ Ծարին անցած Դադիվանքը դառնում է իշխանության հոգեւոր կենտրոնն ու տոհմական տապանատունը: Սակայն սա չի խանգարում, որ Խադավանքը մնա հարգված եպիսկոպոսանիստ եւ վայելի Ծարի իշխանության պայազատների հոգածությունն ու խնամքը: Որոշ աղբյուրներ փաստում են, որ ավելի ուշ ժամանակներում եւս Խադավանքը շարունակում էր մնալ որպես իշխանության տոհմական գլխավոր տապանատունը: Այս ամբողջ ընթացքում Խադավանքը եղել է Արցախի Մեծ Կողմանք կամ Մեծ Կվենք գավառի առաջնորդարանը:

Տաճարի սյուներից մեկին արձանագրություն է, որ պատմում է, թե ինչպես է եղբայրներից մեկն անդամակցել միաբանությանը, նվիրատվություն կատարել, արժանացել եղբայրների եւ առաջնորդների ջերմ ընդունելությանը. «Կամօքն Աստուծոյ եւ հրամանաւ տեառն Յօհաննէսի, Աստուծով ես՝ Շահանս, միաբանեցայ սուրբ ուխտիս Խադի, տուի զծառատակաց այգետեղն եւ այլ ընծայ ի սուրբ միաբանաց, ողորմութեամբ առաջնորդ տէր Ռուբէնի եւ ամենայն միաբանքս տուին երեք պատարագ ի տօնի Վերափոխման եւ Աղուհացից. պարտական է առաջին Աստուծոյ թւ. ՉԺԴ (1265 թ.)»:

Կիրակոս Գանձակեցին իր Պատմության մեջ Խաչենի Գրիգորիս եւ Եղիա եղբայր վարդապետների մասին խոսելիս հիշում է, որ նրանք վախճանվել են եւ «կան ի պահեստի յաստուածափայլ տանն Խադայ»:

Ուշագրավ է երկար ժամանակ Ծարի Դոփյան իշխանական տան տոհմական սեփականությունը համարվող Ավետարանը, որը հետագայում կոչվեց Թարգմանչաց (Գարդմանաց գավառի Թարգմանչաց վանքում պահվելու համար): Այս մատյանի 1312 թ. գրված հիշատակարանում նշվում է, որ Վերին Խաչենի իշխան Գրիգոր Դոփյանն ու նրա կին Ասփան (Տարսայիճ Օրբելյանի դուստրը) ձեռագիրը նվիրել են Խադավանքին. «Ամենայն բարեպաշտութեամբ զարդարեալ զարդարեաց զանազան սպասիւք եւ շինուածովք զեկեղեցիս Հայաստանեաց. ստացաւ զսուրբ Աւետարանս յարդար ընչից իւրոց եւ ընծայեաց ի սուրբ ուխտն Խադարի»: Թարգմանչաց Ավետարանը հայկական ձեռագրական ու մանրանկարչական ժառանգության նշանավոր նմուշներից է:

Ինչպես նկատեցինք, վանքը վկայվում է տարբեր ձեւերով՝ Խադավանք, Խադի վանք, Խադայի վանք, Խադարի վանք եւ այլն: Խադավանք-Խադարի վանքը Արցախի բարբառի հնչյունական եւ արտասանական առանձնահատկություններին ենթարկվելով՝ հնչում է նաեւ Խաթրավանք կամ Խըթրավանք ձեւերով:

Վանական համալիրը նոր շունչ է ստանում ԺԲ դարի վերջի եւ ԺԳ դարի սկզբի հյուսիսարեւելյան Հայաստանի հոգեւոր մշակույթի զարգացման գործին մեծ ավանդ բերած երախտավորներից մեկի՝ Հովհաննես վրդ. Խաչենցու («Յովհաննէս ի գաւառէն Խաչէնոյ») շնորհիվ. հոգեւոր գործիչ, որին Կիրակոս Գանձակեցին անվանում է «այր առաքինի եւ սուրբ»:

Հիշենք նաեւ մեկ արժանավոր այլ հոգեւորականի: Վերին Խաչենի իշխանական տան պայազատներից էր Հովհաննես վարդապետը: Լինելով Սարգիս Զաքարյան ամիրսպասալարի երկու սիրասուն զավակների՝ Զաքարեի ու Իվանեի դաստիարակը, նա հոգեւոր սպասավորության էր կոչված Հաղպատ եւ Սանահին վանական համալիրներում: Այս երկու վանքերում էլ Հովհաննես վարդապետը ձեռնամուխ է լինում ոչ միայն շինարարական գործունեության, այլ նաեւ զարկ է տալիս գրչության գործին ու մանրանկարչական արվեստի զարգացմանը: 1204 թվականին կրկին գալով Խաչեն՝ նա վերականգնում է ավերված Խադավանքը եւ ավարտում վանական համալիրի գլխավոր տաճարի կառուցումը, որի մասին եկեղեցու արեւելյան պատին առկա է հետեւյալ արձանագրությունը. «Ի ՈԾԳ (1204) թուիս ես տէր Յովհաննէս շինեցի զեկեղեցիս եւ ժողովեցի զխաչ եւ զգիրք, որ ի սմա եւ արկի զՋոթացն այգի եւ զՄատաղիսն բազում աշխատութեամբ եւ ետու ի վանսն իւր ամեն սահմանաւն իմ աղբօրս Հասանայ եւ իւր որդւոցն՝ որդեացն Հաթերքոյ տեառն միջնորդութեամբ. ով խափանէ, խափանեսցի ի կենացն Աստուծոյ»:

Այսինքն՝ կարող ենք տեսնել, որ Հովհաննես վրդ. Խաչենցին կառուցում է Խադավանքի կաթողիկե եկեղեցին՝ այնտեղ հավաքելով ձեռագիր մատյաններ, խաչեր, վանքին է նվիրում այգի եւ այս ամենը Հաթերքի տեր իշխան Վախթանգի միջնորդությամբ հանձնում է եղբայր Հասանին եւ նրա որդիներին:

Հովհաննես Խաչենցու կատարած կարեւոր ձեռնարկումներից մեկը, թերեւս ամենակարեւորը, վանքին կից մատենադարանի ստեղծումն էր, որը հետագայում համալրվում է ինչպես գրչության մոտակա կենտրոնների ձեռագրերով, այնպես եւ կողոպտված ու գերեվարված մատյանների տունդարձի շնորհիվ: Հատկապես դիտելի է Գետաշենի ձեռագրի ճակատագիրը, որը բանասիրությանը հայտնի է որպես Հաղպատի Ավետարան: 1223 թ. արցախցի Սարգիս քահանան Անիում գնում է հիշյալ ձեռագիրը եւ նվիրաբերում Խադավանքին՝ «իւր տեղի սննդեան»: Երկար ժամանակ անց ձեռագիրը տեղափոխում են Գետաշեն: Ի դարի 20-ական թվականներին Գարեգին Հովսեփյանը (1943—1952 թթ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո) այն բերում է Սուրբ Էջմիածնի մատենադարան: Հաղպատի ձեռագրական եւ մանրանկարչական դպրոցի ամենաբարձրարվեստ գործերից է Գետաշենի Ավետարանը:

Խադավանքի շինարարական արձանագրությունն ունի նաեւ երկրորդ մաս, որ Հովհաննես վարդապետի եղբայր Հասանն է թողել. «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Հասանայ, որ երբ իմ աղբերս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ երետ, ես զԽնձորոյ բակս իւր սահմանով ի յեկեղեցիս տուի. ով հակառակ կայ Աստուծոյ հակառակ կայ, ով զայս գիր խափանէ, չունի թողութիւն յԱստուծոյ»:

Արձանագրություններում հանդիպող «Հաթերքի տէրը» քառասնամյա իշխանությունից հետո Դադիվանքում կրոնավորություն ստանձնած Հասան իշխանի որդի Վախթանգն էր՝ Խաչենի գահերեց տիրակալը, Մխիթար Գոշի եւ հայ մշակույթի ժամանակի հովանավորը: Իսկ Հովհաննեսի եղբայր Հասանը Ծարի կամ Վերին Խաչենի իշխանն էր՝ Սարգիս Զաքարյան ամիրսպասալարի դուստր Դոփի ամուսինը:

Հետագայում՝ մինչեւ 1220-ական թվականները, իշխանությունն ամուսնու մահից հետո վարում էր Դոփը, որից եւ իշխանական տունը կոչվում է Դոփյան: Դոփը, ըստ մատենագրական վկայությունների, մշտապես վայելել է Զաքարյան եղբայրների օժանդակությունը: Դոփի գործունեության շնորհիվ հզորանում է Ծարի իշխանությունը, բարեկարգվում ու ծաղկում են հոգեւոր կենտրոնները, այդ թվում՝ Խադավանքը: Ըստ պահպանված արձանագրության՝ Դոփ իշխանուհին 1225 թ. կառուցել է եկեղեցու գավիթը, կանգնեցրել է մի մատուռ եւ վանքին է նվիրաբերել բազմաթիվ ընծաներ:

Պահպանվել է նաեւ Հասանի եւ Դոփի որդու՝ Գրիգոր իշխանի հիշատակարանը, որ պատմում է սելջուկ թուրքերից փրկած այն ձեռագիր մատյանների մասին, որոնք հետագայում հանգրվանում են Խադավանքում:

Հին աղբյուրներից իմանում ենք նաեւ, որ 1215 թ. Հասանն ու իր մայր Շուշիկը կառուցել են Սուրբ Կարապետ եկեղեցին: Այս տեղեկությունը հաղորդում է իրենց իսկ արձանագրությունը. «Ես Հասան եւ մայրն իմ Շուշիկ շինեցաք զսուրբ Կարապետս ի Խադայ տապանատունս... ՈԿԴ (1215 թ.): Նույն կերպ փաստվում է, որ1225 թ. Հովհաննեսաշեն տաճարի գավիթն է կառուցել Դոփը՝ եկեղեցու հյուսիսային պատի անկյունում արձանագրելով այդ հանգամանքը:

Շարունակելի

Համլիկ ՄԱԴՈՅԱՆ

Նորահայտ վավերագրեր կուսանաց եկեղեցի կառուցելու մտադրության մասին

Սկիզբը՝ թիվ 11

Նույն հրովարտակի մասին է խոսվում նաեւ Թագուհի մայրապետի՝ 1798 թվականի մայիսի 6-ին Ղզլարից գրված նամակում, որտեղ մայրապետը եւս շնորհակալությամբ հայտնում է եկեղեցաշինության թղթերն ստանալու մասին:

Ստորեւ՝ Թագուհի մայրապետի նամակը.

«Բարձր արժանավայել սրբազնագունեղ, ողորմած Տէր մեր եւ բարերար

Մինչ էաք ի խոր մեծի յուսահատաբար տրտմութեան, ապրիլի ութէն գրեցեալ շնորհարձիր ուրախարար թուղթդ ընկալաք մայիսի մուտն: Եւ ոգի գտեալ՝ շնորհակալ պարտաւոր աղօթակցութեամբ գոհունակեցաք զտէառնէդ, որ գթառատութեամբ անմոռանալ ունիս զտառապակիրս ի մտի: Եւ գրէ տէրութիւնդ ի բիւր աղերսագրոյն մերոյ ինչ-ինչ յաւելացուցեալ եւ պակասեալ. ոչ, Տէր մեր: Ի հասանել գրոյն ետուք եղբօրն մերոյ տէր Սահակ որդեկին քո, եւ նա տարեալ օրինագրել ետ, զոր ինչ իսկն էր եւ առաքեցաք առ Սրբազնութիւնն: Բայց թէ զոր հոգացեալ ես վասն հանգստարանի փրկութեանն եւ եկեղեցաշինութեանն, մեծ ողորմութիւն է: Միայն թէ երեսք մեր առաթուր եդեալք ժտեմք փրկչէդ մերմէ եւ վեհազնիւ մեր բարերար Յոհաննիսէն եւ բարեժառանգ ենարալ Սէրգէյիչէն, զի առաւել ջանալ եւ հաստատել վասն մեր յաւիտենական ռոճիկ իւրոյ կայսերական ողորմութենէն: Զի գիտէ Տէրութիւնդ, որ ամենայն ինչ փոփոխի, բայց ողորմութինն յաւիտեան կայ:

Եւ բարօք գիտես զբարս տեղոյս յինքեանց զինչ հոգան, զի զմեզ հոգայցէն: Ո՞ գիտէ շինեն զեկեղեցին, թէ՞ ոչ: Բայց թէ ողորմութիւն կայսերական ընդ ուր եւ հցեմք ընդ տէրութեանն իւրոյ, ոչ պակասի: Եւ ըստ հրամանիդ աղերսական գիր գրեցաք վրացերէն առ բարեբարոյ ենարալ Լաշկարովն, զոր մաքուր Աջովդ կարէս տալ եւ ողորմելութիւնն մեր պատմել:

Մնալով ողորմութեանդ ակն ունել միաբանիւք հանդերձ բարձր սրբազնութեան ձերում:

Ամենահպատակ մահտեսի մայրապետ Թագուհի, հանդերձ միաբան սարկաւագուհեօք» (Կաթ. դիւան, թղթ. 8, վ. 30, 1 էջ):

Նկատենք, որ նամակում առկա է որոշ երկմտություն. Թագուհի մայրապետը վստահ չէ՝ կկառուցվի՞ եկեղեցին, թե՞ ոչ: Վերջում կրկին նույն խնդրանքն է՝ իրենց համար կայսերական մշտական ռոճիկ սահմանել, քանի որ տեղացիները չեն հոգում իրենց մասին:

Իրականում Թագուհի մայրապետի երկմտությունն անհիմն չի եղել:

Այսպես՝ Սահակ քհն. Աբրահամյանի 1798 թ. մայիսի 29-ի նամակում կարդում ենք. «Կուսանաց բանն չի լինում» (Կաթ. դիւան, թղթ. 8, վ. 36):

Շուտով վախճանվում է նաեւ Թագուհի մայրապետի հետ Թիֆլիսից փախուստի տված «իշխան Մելէք աղայի դուստր սարկաւագուհի Գայիանէ յորջորջեալ Խօջայ Բէհբուդեանը», որն ամենայն հավանականությամբ դուստրն էր Թիֆլիսի կուսանաց անապատի հիմնադրի՝ նույն Մելիք-աղա Բեհբությանցի: Նրա մահը հուսահատ տրտմության մեջ է թողնում մյուս կույսերին:

«Զայս եւս իմա տէր իմ, զի մինչ գիրդ եկն վասն կուսանացն եւ կոյս Գայանէն հիւանդ կայր երեք օրեայ դի կենդանի եւ առանց խօսում, եւ միւս օրն որ էր ամսոյս 19-ին չուեաց առ անձկալի փեսայն իւր եւ եթող սուգ մեծ իւրայնոցն եւ մնացեալքն կան դառն կեօք եւ յուսահատ տրտմութեամբ ակն ունելով ողորմութեանդ»,– գրում է Ղզլարի Մինաս քահանան 1798-ի հուլիսի 22-ի իր նամակում (Կաթ. դիւան, թղթ. 8, վ. 53):

Հայտնի չէ, թե ինչ է պարունակել քահանայի նամակում նշված Արղությանի գիրը «վասն կուսանաց»: Սակայն մեզ հայտնի մյուս նամակներից պարզ է դառնում, որ կուսանաց եկեղեցու կառուցման ծրագիրը մնացել է անկատար, թերեւս մերժվել է նաեւ ռուսական կայսրությունից նպաստ ստանալու՝ կույսերի խնդրանքը:

Հովսեփ Դ Արղության կաթողիկոս Ամենայն Հայոց



Թագուհի մայրապետի 1798 թ. սեպտեմբերի 24-ի նամակը գրված է հուսահատ շեշտադրությամբ: Մահճին գամված ծերունի մայրապետը տրտմելով մեծ ցավ է ապրում Գայանեի մահվան, կույսերի եկեղեցու եւ կացարանի կառուցման արգելման, իսկ առավելաբար՝ մնացած կույսերի որբ եւ անճար մնալու համար: Առավել ուշագրավ է մայրապետի՝ Հաշտարխանի Եկատերինե եկեղեցու մասին հիշատակումը, թերեւս, կույսերով այնտեղ տեղափոխվելու խնդրով: Այս նամակը եւս ներկայացնենք ամբողջությամբ.

«Բարձր արժանավայելուչ սրբազնագունեղ եւ ազգակեցոյց ողորմած Տեր մեր եւ այցելու:

Օգոստոսի 5էն եւ ի 9էն շնորհաբաշխ եւ օրհնառաք թուղթսդ ընկալաք եւ ոգի գտեալ սփոփեցաք յուսադրական ողորմութենէդ:

Գիտէ տէրութիւնդ, որ մահ Գայիանին յայսմ վշտակիր նեղութեանս մեծագոյն ցաւ եղեւ, քան զառաջինն, նաեւ տեղոյս եկեղեցոյ եւ բնակութեան մերոյ շինութեանն արգելման: Մահ եւ ամենայն ուստեքէ անճար մնացեալ մեր, ապաւինելով գթասրտութիւն ողորմած Հօրդ մերոյ, իբր ի պատկերի Աստուծոյ երկրպագելով, ահա պահարանոջս եդեալ աղերսանաց գիր առ ողորմած մեր բարեպաշտ ենարալ Լաշքարովին, ինչպէս որ հրամայեալ էիր: Եւ ողորմած ինքնակալին եւ ինքնակալուհւոյն եւս գրեուցաք ինչպէս օրէնն էր եւ տուաք սոյն փոշտիս, որ վասն Հաշտարխանու հանգստարանի Եկատարինէ եկեղեցոյն: Եւ թէ որոյն ողորմութեանն եւս զմեզ պակասիցի, կենդանոյն զմեզ հողով ծածկելն է արժան:

Վասն զի տեղս ժողովրդեան անմիութիւնն յայտէ Տէրութեանդ, զինչ յաւելից գրել: Մանաւանդ, Տէր իմ, թէ ի զանազան մտածմանց, թէ վասն Գայիանի մահուանն եւ թէ առիթ ծերութեանն ահա ե (5) ամիս է, զոր անկեալ կամ ի մահճի՝ դի կենդանի եւ խօսուն մեռեալ, գիտեմ ես ոչ մնամ արժանանալոյ համբուրման շնորհաբաշխ աջոյդ: Բայց թէ զտէրդ իմ յանձնեմ Տեառն ամենից, եւ զողորմելի որբ մնացեալ դստերսն իմ յանձնեմ առաջի Աստուծոյ ի գթառատութիւն ծնողիդ: Թեպէտ տրտմեալ եմ մինչեւ ի մահ վասն Գայիանին, ապայ առաւել հոգւով եւ մարմնով տրտմեալ եմ զկենդանեացս որբ եւ անճար մնալն, ի տարր աշխարհիս, որ ոչ ունիմ զոք օգնական, բայց մի Աստուած եւ խնամակալ հոգեւոր Հայրդ: Եւ մնալով տառապակիր դստերբ իմով բարձր Սրբազնութեանդ ամենախոնարհ աղախին:

Մայրապետ Թագուհի» (Կաթ. դիւան, թղթ. 8, վ. 69, 1 էջ):

1799-ին Ղզլարում վախճանվում է նաեւ մահտեսի Թագուհի մայրապետը՝ իր ունեցվածքը կտակելով Երուսաղեմի վանքին, միաբանությանը, պատրիարքին, որպեսզի պատարագի ընթացքում «յիշեն զհոգի աղախնոյս», ինչպես նաեւ՝ Էջմիածնին, Թիֆլիսի իր խոստովանահորն ու հոգեւոր դստերը (*Խորէն քհնյ. Խուցեան*, նշվ. աշխ., էջ 24):

Կարելի է ենթադրել, որ Թագուհու մահվանից հետո էլ Ղզլարում մնացած կույսերի եկեղեցու եւ կացարանի հարցը որեւէ կերպ չի լուծվել:

Այսպես՝ Մինաս քահանան 1799 թվականի մարտի 10-ի նամակով հայտնում է, որ կույս Մարիամը հրաժարվել է Հովսեփ արքեպիսկոպոսի՝ մայրապետության պաշտոնն ստանձնելու առաջարկից ոչ միայն այն պատճառով, որ դեռ չի բոլորել մայրապետի մահվան տարելիցը, այլեւ՝ անդաստական են եւ չունեն մշտական բնակության վայր:

«Եւ զմխիթարութեան թուղթն, զոր գրեալ էիր, ողորմելի եւ ի քէն մխիթարեցեալ կուսանացն ետու եւ զհրամանդ մայրապետութեան մահտեսի Մարիամին յայտնեցի եւ կամեցայ ի կատարումն առնել: Բայց նա, աղերսս անկեալ առ ողորմած տեառնդ, ժտեաց ասելով՝ նախ մայրապետի տարի չէ լրացեալ, նաեւ դադարանք եւ բնակութիւն չունիմք, այլ աստանդականք տարբերեալք: Եւ շնորհակալ եմք աստուածաբար հայրագութ ողորմութենէ տեառն մերոյ, ըստ իւրոյ բարձրախնամ ողորմութեանն, որպէս եւ ողորմեցեալ է եւ ունի բազմագութ նախախնամութիւնն: Երբ ինքն եկեսցէ, զինչ իւր բարեխնամ կամքն է, այնպէս արասցէ: Որով եւ մեք թոյլատրեցաք ըստ հայցուածոյ նորին եւ յայտնեցաք տեառնդ: Ոչ ինքեանք եւս գրեցին»,– գրում է քահանան Հովսեփ արք. Արղությանին (Կաթ. դիւան, թղթ. 9, վ. 30):

Ինքը՝ կույս Մարիամը, 1799 թ. հոկտեմբեր 3-ի նամակում կրկին խնդրում է իրեն ազատել մայրապետության պաշտոնից, որովհետեւ «առանց տան ոչ էր կար տնտես լինիլն եւ առանց փեսայի հարսն առանց հարսարանօջ ընտրելն»:

Ավելորդ չենք համարում այս նամակը եւս ներկայացնել ամբողջությամբ.

«Բարձր Արժանապատիւ եւ Արժանավայել Քոյին Բարձր Սրբազնութեանդ

Ողորմած Տէր մեր, խնամածնող բարերար,

Զողորմածագութ եւ շնորհաձիր շնորհալի մատամբ գրեցեալ զօրհնութեան եւ մեզ մխիթարական թուղթդ ընկալաք նոյնոյ ամսոյ 22-երորդին՝ իբր ի Բարձրելոյն շնորհեցեալ փոյթ մխիթարութեանն, որով ոչ ինչ ունելով զտրիտուրն, պարտաւորեցաք մինչ ի յելն շնչոյս մերոյ: Երկրաման տիմօք խնդրեալ Բարձրելոյն՝ պահպանել զանգին զկեանս տեառնդ մերոյ անսասան եւ ընդ սրբոց հարցն մերոց, լուսապսակաց Հայրապետաց վարձահատոյցս եւ պսակակիցս առնել: Զտառապանս մեր կրելով եւ վշտակցաբար ցաւակից լինելովդ զԱստուածաբար Տէրութեանդ մեր՝ ի հոգեկան եւ ի մարմնական վշտակցութեանց ազատ պահեսցէ միշտ յուզող ի դրունս կայսերաց եւ թագաւորաց:

Եւ վասն մայրապետութեան աղախնոյս տեառնդ մեր, զոր հրամայեալ էիր թղթոջ, Տէրութեանդ աղերսեմ ներել ի փառս Արարչին, վասն զի նախ անարժան վարկայ զանարժանս զիս յայտմ գործոց, նաեւ չէր էր լրացեալ ամ վախճանի մայրապետին մերոյ, եւս առանց տան ոչ էր կար տնտես լինիլն եւ առանց փեսայի հարսն առանց հարսարանօջ ընտրելն: Վասն որոյ երես անկեալ առաթուր ներբան գարշապարացդ համբուրելով՝ հայցեմ ներել, մինչ ի գալ տեառնդ մերոյ, կրկին նորոգողի եւ զծածկեալ ցաւս մեր իմանալ, եւ զոր ինչ կամք Տերութեանդ է, այնպէս առնել:

Մեք ամենքեանքս ոչ եմք մի-մի, այլ մի, մի անդամք եւ մի ոգի՝ մայրք, քուրք եւ դստերք միմեանց առ Քրիստոս եւ առ Տերութեանդ: Եւ երբ մի ոգի միացեալք տեսանեմք փրկչաւէտ տես Քոյին, յայնժամ ամենայն վիշտն մեր բարձցի եւ լինիմք ի նոր: Առաւէլ եւս երես անկեալ հայցեմք կայսերական ըռոճիկ հայցել վասն մեր, զի լիցի ապրուստ կենաց մերոց:

Բարձր սրբազնութեանդ մնամք ամենեքեան ի միոյ բերանոյ պարտաւոր աղօթամատոյցք կուսական դստերք եւ աղախնայք:

Մահտեսի Մարիամ» (Կաթ. դիւան, թղթ. 9, վ. 144):

Սրանով ավարտվում են մեզ հայտնի նորահայտ վավերագրերը Ղզլարում հաստատված Թիֆլիսի կույսերի մասին:

Վերադառնանք Խուցյանի պատմությանը. 1801 թվականին Ղզլարով անցնելիս՝ արդեն կաթողիկոս ընտրված, բայց դեռեւս չօծված Հովսեփ Արղությանն ի վերջո կոնդակով հաստատել է կույս Մարիամի մայրապետությունը. «Կացուցանեմ զքեզ ի վերայ կրօնաւորուհի կուսանացն մայրապետ» (*Խորէն քհնյ. Խուցեան*, նշվ. աշխ., էջ 20):

Ուշագրավ է, սակայն, մեկ այլ փաստ: Ըստ Խուցյանի՝ տարիներ անց, երբ Մարիամ մայրապետը կույսերի իր խմբով Ղզլարից վերադարձել է Թիֆլիս, հանդիպել է որոշ անախորժ մրցակցության: Նրա վերադարձին Դանիել կաթողիկոսի հրամանով Ս. Ստեփանոս կուսանոցում մայրապետ էր նշանակված Հուստիանե Աստվածատրյանցը: Վերջինս, ըստ Խուցյանի, այս պաշտոնն զբաղեցրել է 1806 թվականից մինչեւ 1839-ը: Ուշագրավ է նաեւ, որ մինչ այդ՝ Թագուհի մայրապետի մահվանից հետո, կուսանոցի մայրապետն է եղել Կատարինե Ամատունին (*Խորէն քհնյ. Խուցեան*, նշվ. աշխ., էջ 27–28):

Արդյո՞ք սա նշանակում է, որ պարսից արշավանքի օրերին ոչ բոլոր կույսերն էին միացել Թագուհի մայրապետի փախուստին: Արդյո՞ք ավերված Թիֆլիսում ինչ-որ կերպ շարունակել է գործել Ս. Ստեփանոս կուսանաց վանքը, եւ արդյո՞ք Ղզլարում կամ Աստրախանում կուսանաց վանքի շինության դեպքում փախստական կույսերն այլեւս Թիֆլիս չպետք է վերադառնային՝ մի նոր կուսանոցի հիմք դնելով առավել ապահով Ռուսահայոց թեմում:

Հարցերի պատասխանները միանշանակ չեն:

Ղզլար

Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ



Հայացք դարի բարձունքից

Սկիզբը՝ թիվ 11

....Մայիսի 2-ի համար վերադարձի ավիատոմս ունեի: Նախօրեին գեղանկարչուհուն եւ նրա ամուսնուն՝ Տիմիրյազեւի անվան գյուղակադեմիայի պատկառելի պրոֆեսոր Գուրգեն Ավետիսյանին հրաժեշտ տալու համար վերելակով նրանց բնակարան եմ բարձրանում: Ձեռքիս լրագրեր են: Հանկարծ աչքս գամվեց «Правда» կենտրոնական թերթի թարմ համարի առաջին էջի ներքնամասում զետեղված սեւ, թավ գծերով շրջանակը: Ընդամենը երկու տող, եւ ինչպիսի՜ ցավալի գույժ... «Վախճանվել է խորհրդային խոշորագույն կոմպոզիտոր Արամ Իլյիչի Խաչատրյանը»:

Նրբանկատ, խորազգաց ամուսիններն իսկույն կարդացին հայացքս...

– Ինչ-որ տխուր եք, լուրջ պատճառ հո չկա՞,– հարցրին:

Ես անխոս մատնացույց արեցի թերթի գուժկան սեւ շրջանակը: Մ. Ասլամազյանն ակնոց դրեց, կարդաց ու... ողբաց...

– Վա՜խ, թանկագին Արամ Իլյի՛չ, մեր պանծանք, դու էլ հեռացա՞ր,– խոսեց ընդհատ-ընդհատ հեծկլտալեն:

Մի քիչ հանդարտվելուց հետո շարունակեց.

– Ինչպե՞ս կարող եմ մոռանալ 1970-ին Կուզնեցսկիյ Մոստ, թիվ 20-ում բացված իմ անհատական ցուցահանդեսին նրա այնքա՜ն սրտագին արձագանքն ու գնահատանքը... Ուշադիր, ներանձնացած դիտեց նկարները (խնդրել էի՝ ոչ ոք չխանգարեր նրա դիտումը): Վերջում անո՛ւշ ժպտալեն մոտեցավ ինձ, ջերմ, եղբայրաբար շնորհավորեց, ապա զգացված ասաց. «Սիրելի՛ Մարիամ Արշակովնա, շնորհակալ եմ եւ հպարտ Ձեր հերթական ստեղծագործական այսօրինակ բարձր նվաճման համար: Ձեր գործերում Հայաստանի արեւը կա, բերկրանք, լույս ու լավատեսություն: Ձեր հրաշալի աշխատանքները դիտում էի մեծագույն հաճույքով, եւ ինձ թվում էր, թե նվագախմբի կատարմամբ դյութիչ սիմֆոնիա՝ մեծ համանվագ եմ լսում... Սուր դիտողականություն ունեք, մինչեւ մարդու հոգու խորին շերտերը թափանցող մտքեր ու խոհեր, որոնք միայն դրական հույզեր են բերում, ծնում: Շնորհավորում եմ կրկին: Դուք նպատակադրված ստեղծագործական ճիշտ ուղիով եք արագընթաց սլանում, եւ թող այն երբեք Ձեզ չլքի...»:

Մենք՝ երկու տղամարդ, համակ լռությամբ էինք տանում սիրելի կոմպոզիտորի կորստյան վիշտը (դե՛, ինչ արած, տղամարդիկ այդպիսին են ստեղծված...), իսկ Մ. Ասլամազյանն ասես հոգու պարտք ուներ ասել-խոսելու, հիշելու, դատողություններ անելու...

– Արամ Խաչատրյանն անմահ է: Նրա կենսահաստատ, հզոր, խորապես ազգային ու համամարդկային երաժշտությունն աշխարհն է լսել ու լսելու հար-հավիտյան: Ես ճակատագրի պարգեւ եմ համարում մեծահռչակ, հանճարեղ կոմպոզիտորի, մեծատառով Մարդու եւ Մեծ հայի հետ իմ յուրաքանչյուր հանդիպումը:

Արդեն ուշ երեկո էր, որ հրաժեշտ տվեցի իմ լավ բարեկամ ամուսիններին:

Ունկերումս դեռ Մ. Ասլամազյանի տեւական հեծկլտոցն ու խոսքերն էին, աչքերիս առջեւ՝ սրտացավ քրոջ սրտից բխած նրա արցունքները: Այդ օրը ես ավելի խորը ճանաչեցի նրա սիրտը եւ... առավել հարգեցի գեղապաշտ հայրենակցուհուս...

Հաջորդ օրվա ԽՍՀՄ կենտրոնական բոլոր թերթերն Արամ Խաչատրյանի մեծադիր լուսանկարներով ընդարձակ մահախոսականներ էին տպագրել: Օդանավում ընթերցում էի լրագրերը, կողքիս նստած ուղեւորն ինձ ասաց. «Գիտե՞ք, որ Արամ Խաչատրյանը կտակել է իր աճյունը Հայաստանի հողում ամփոփել, եւ դա Կրեմլի ղեկավարների համար, մեղմ ասած, ոչ հաճելի անակնկալ է եղել...»:

Հայ ժողովուրդը փառքով ու պատվով դեպի անմահություն ճանապարհեց իր հանճարեղ զավակին: Հոգեհանգիստն ու հուղարկավորությունը համաժողովրդական էին, ամփոփումը՝ հայ մեծերի Պանթեոնում:

Իմիջիայլոց, հուղարկավորության ժամին թափորում առանձնանում էր մտավորականի պատկառանք ներշնչող արտաքինով ու պահվածքով, միջինից քիչ բարձր տարիքի մի տղամարդ, որը վշտոտ, անթարթ հայացքով ու անշարժ կանգնել էր՝ հովանոցը գլխավերեւում պահած:



Սերժ Մանուկյանի դիմանկարը, 1977 թ.

Շուտով հիշեցի նրան. ուղիղ տասը տարի առաջ՝ 1968-ի հունիսին, երբ այստեղ հուղարկավորում էինք մեծահամբավ դերասան Վահրամ Փափազյանին, անակնկալ հորդ անձրեւ տեղաց: Այս նույն մարդը, որ այդ օրը շատերի պես անձրեւանոց չուներ, չփորձեց անգամ պատսպարան գտնել եւ վայելուչ իր հագուկապով արձանացած, վշտաբեկ մնաց մինչեւ հուղարկավորության վերջին րոպեն ու... թրջվեց մինչեւ վերջ...

Շատերիս ուշադրությունը գրավեց մեր հռչակավոր դերասանի կորստի ցավն այդպես համակ, ներանձնացած ու խորապես սգացողի նրա վարքագիծը:

«Ո՞վ է այդ չափազանց պարկեշտ, բարձրաբարո, ինքնօրինակ մարդը»,– հարցրինք միմյանց: Ճանաչողներից մեկն ասաց, որ Ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Սեւադա Բակունցն է՝ մեր մեծանուն գրող Ակսել Բակունցի որդին: Մեր համակրանքն ավելի մեծացավ.

– Այո՛, ուրեմն նա որդին է հայ անզուգական արձակագիր, բարեկիրթ մտավորական, անաղարտ նկարագրի տեր Ակսել Բակունցի՞: Ուրեմն ճիշտ է ասույթը. «Պտուղը ծառից հեռու չի ընկել»:

Մտորում էի՝ թերեւս կարելի է հասկանալ մեր մեծերին իր հարգանքի տուրքը տվող Սեւադա Բակունցի բազմապատկված կսկիծը, նրա հոգեկան ապրումները, որոնք ուղղակի հոգեխորքային էին...

Եթե չարոգի, խավարամիտ ստալինականների սեւ, բիրտ ձեռքով չկտրվեր նրա սիրասուն հայրիկի՝ մեծն Ակսել Բակունցի կյանքի թելը, եւ նա ապրեր, ստեղծագործեր, աշխարհից հեռանար իր բնական մահով, ապա նա այս երկնքի տակ... գերեզման կունենար, եւ նրա վերջին հանգրվանը, անկասկած, այստեղ՝ հայ մեծերի Պանթեոնը կլիներ...

Տունդարձի ճանապարհին մտաբերեցի Մ. Ասլամազյանի՝ լույսով ու թախիծով առլեցուն պատմությունները մտերիմ ընկեր եւ անկեղծ բարեկամ, անմոռանալի Բակունցի մասին:

1977-ին, երբ գեղանկարչուհին երեւանյան իր արվեստանոցում պատկերագրում էր իմ յուղաներկ դիմանկարը, միաժամանակ եւ նկարում էր, ե՛ւ խոսում (երեւի նաեւ հայացքս «որսում»): Եվ երբ խոսքը եկավ Բակունցին, ասաց, որ իրենց ծանոթությունը եղել է գրողի ծննդավայր Գորիսում, ուր արվեստագետ քույրերը Լենինգրադից եկել էին Զանգեզուրի մարգարիտ, շա՜տ ինքնատիպ քաղաքում ստեղծագործելու եւ հանգստանալու:

Ահավասիկ երկուերեք հիշարժան դրվագ նրա պատմածներից:

Բակունցը ձիեր է վարձում եւ Ասլամազյան քույրերին Տաթեւի վանքահամալիր առաջնորդում: Ճանապարհի՝ Որոտանի կիրճի գողտրիկ մի վայրում, աղջիկներն ուզում են լուսանկարվել Բակունցի հետ՝ ի հուշ: Սակայն Բակունցը վերջին պահին հրաժարվում է՝ ի զարմանս հյուրերի, ապա դառնացած պարզաբանում պատճառը. «Սիրելիներս, շատ վատ ժամանակներ են գալիս... Զգում եմ՝ գլխիս օրօրի սեւ ամպեր են կուտակվում, եւ ես չեմ ուզում, որ ֆոտոփաստով վտանգեք ձեր ծիծաղկուն, ծաղիկ կյանքը...»:

Ես նկարվողի գրեթե անշարժ կեցվածք էի ընդունել, իսկ գեղանկարչուհին վարժ ու եռանդուն շարունակում էր վրձնել: Քիչ անց նրա դեմքը ողողվեց ժպիտով՝ հիշեց զվարճալի, կարելի է եւ ասել՝ պարադոքսային մի դրվագ, որը, ըստ էության, տրագիկոմեդիայի ժանրից է:

– 1935-ի օգոստոսյան մի առավոտ մեր վարձակալած տուն եկավ Բակունցի ամենակրտսեր եղբայրը, թե՝ Սանթրին (Ալեքսանդր-Ակսելին տանն այդպես էլ անվանում էին) Ձեզ մեր տուն է հրավիրում: Երանի հետ գնացինք եւ ի՞նչ տեսնենք՝ տանձենու ստվերում մեծ սեղան են բացել, շատ հյուրեր կան, Ակսելն էլ թամադա է: Մեզ նկատելով՝ քաղաքավարությամբ ընդառաջ եկավ՝ մի տեսակ անորսալի, գաղտնագրված ու հանելուկային ժպիտով:

– Ես կատարում եմ Շիրվանի՝ ծերունազարդ, իմ պատկառելի գրչեղբայր Ալեքսանդր Շիրվանզադեի պատգամը,– ասաց:– Նա ինձ պարտավորեցել է, որ իր մահվան լուրն ստանալուն պես սեղան գցեմ ու... քեֆ անենք, հիշենք իրեն իբրեւ ողջ, կենդանի մարդու, որպես ընկերոջ եւ գրողի՝ առանց տխուր խոսքերի...

Այդ օրն Ակսելն ավելի սրամիտ էր ու պերճախոս, երկար պատմում էր իր եւ Շիրվանզադեի հանդիպումների ու արկածների մասին:

Մեր վերջին հանդիպումը Երեւանում էր: Երեկոյան զբոսանքից վերադարձանք Կոնդի մեր թաղամասը: Ակսելը չուզեց տուն մտնել, եւ մենք բաժանվեցինք: Մտա բակ եւ հանկարծ զգացի, որ նրա դեմքը, դիմագծերը, պատկերը տարօրինակ կերպով մեկից ջնջվեցին իմ հիշողությունից: Արագ դուրս վազեցի ու կանչեցի.

– Ակսե՛լ, վերադարձիր մեկ րոպեով, ես բոլորովին մոռացել եմ քո դեմքը:

Նա դառը ժպտաց ու ասաց.

– Մարիամ, դա շատ վատ նշան է... Երեւի մենք այլեւս չհանդիպենք...

Իրոք որ՝ դա վերջին հանդիպումն էր... Նրա զգայուն սիրտը ճիշտ էր կանխազգացել. շուտով ձերբակալեցին նրան եւ սպանեցին... Մարեց լուսամիտ, անկրկնելի մարդը, ժամանակի խավարում պայծառ լուսատուն...

Եվ դա արվեց մի երկրում, ուր որոշել էին կոմունիզմ կառուցել...

* * *

Չխախտելով տասնամյակների իրենց ավանդույթը՝ 1978-ի աշնանը գեղագետ քույրերը եկան Հայաստան՝ հայրենիքի կարոտը դույզն-ինչ չափով մեղմելու, հանգստանալու եւ, իհարկե, ստեղծագործելու: Ես նրանց իմ ծննդավայր՝ Ոսկեվազ գյուղ հրավիրեցի: Մեզ միացան նաեւ Ասլամազյան յոթ քույրերից երեւանաբնակը՝ տիկին Հասմիկը, եւ գեղանկարիչ, Գեղարվեստի ակադեմիայի դասախոս եւ պարզապես կենսախինդ այր Բաբկեն Քոլոզյանը:

Գեղանկարիչների ցանկությամբ իմ ավտոմեքենայով Աշտարակ քաղաք մտանք ձորամիջի հին՝ ժէ դարի եռակամար կամրջով, որը, ի դեպ, նաեւ շատ այլ արվեստագետների է միշտ գրավել: Հետո կարոտով դիտեցինք է դարից կղմինդրե ծածկը պահպանած Ս. Կարմավոր գողտրիկ մատուռը, Ծիրանավոր (Ե դար) ամրոց-եկեղեցին, այնուհետեւ Ս. Մարիանեն, Մուղնու Ս. Գեւորգը, Քասախի ձորապռնկի Ս. Հովհաննավանքն ու Ս. Սաղմոսավանքը, նվիրական սրբատեղիներ, ուր իրենց երիտասարդական վառվռուն օրերին հաճախ են այցելել մեր երեք գեղանկարիչները՝ նկարակալով ու վրձիններով... Սաղմոսավան գյուղում Բաբկեն Քոլոզյանը խորհրդավոր մի ժպիտով մեզ առաջարկեց մի քանի րոպեով այցելել իր ամառանոցը՝ պարզելու, թե ինչ արդյունք է ունեցել արեւի տակ՝ սկուտեղներում, չորացող մրգերը գող կաչաղակների ավազակությունից պաշտպանելու՝ իր հեղինակած «չտեսնվա՜ծ, ուրույն, անեռեւակելիորեն հետաքրքիր մեթոդը»:

Տեղ հասանք: Ամենաուշագրավը պատշգամբի որմին տանտիրոջ «կերտած»՝ բնականից խոշոր, կենդանի, շարժուն, ասես թռիչքի պատրաստ չալտիկ կատուն էր: Իրականին այնքա՜ն նման էր մեծ վարպետությամբ եռաձավալ պատկերված՝ աչքերից կանաչ լույս ճառագող՝ չրերի «պահապան» փիսոն, որ կաչաղակներն ու ճնճղուկները սարսափել եւ... չէին ասպատակել: Տնատեր գեղանկարչի հնարամիտ գյուտն իրոք որ գերազանց արդյունք էր տվել: Փիսիկի «պահակային ծառայությունից» գոհ՝ նա բարձր, քահ-քահ ծիծաղեց: Եվ նրա ծիծաղը վարակիչ էր...

Ուրախ տրամադրությամբ մեքենա նստեցինք եւ Աշտարակ–Օշական կանաչավետ ճանապարհով Ոսկեվազ հասանք: Իսկ Ոսկեվազում, օ՜, միայն տեսնել էր պետք. այն ի՜նչ շռայլ, բերքառատ աշուն էր: Ոսկեւոր այգիներում մրգահաս էր, մրգաքաղ ու այգեկիթ: Մեկն այն իմաստուն, արեւառ, բերք ու բարիքի, երգի ու գույնի խորհուրդը կրող աշուններից՝ շատ ներդաշն Արագածոտն մեր բնաշխարհին: Իսկը՝ ոսկե աշուն. օդը՝ զով, անապական, մրգաբույր: Բոլորս մեր հայացքներն անձկությամբ երկար-երկար հառել էինք Արագած լեռան բազմաբղետ գույների համապատկերին՝ ծով այգիների դրախտին...

Ահա միջնակի շավիղի վրա երեւաց մրգի լի զամբյուղով դեպի տուն եկող մայրս: Պատկերը շատ տպավորիչ էր, եւ այն ինձ հիշեցրեց մեր հողուջրի ծնունդ Արեւշատ Ավագյանի գրական վաղ շրջանի մի բանաստեղծությունը.

Մայրս եկավ այգուց,
Աշնան ոսկե այգուց,
Ձեռքին՝ ոսկե զամբյուղ,
Ձեռքին՝ ոսկե մրգեր,
Միայն մազերի մեջ...
Արծաթ թել էր ընկել...

Շարունակելի

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայությանն ու հայագիտությանը նվիրաբերված կյանք...

Ն. Աղբալյանի ծննդյան 150-ամյակի առթիվ

Կյանքի եւ գործունեության արտասավոր դրամատիկ եւ հարուստ ուղի է անցել հայ նշանավոր գրականագետ, հասարակական-քաղաքական եւ պետական եռանդուն գործիչ Նիկոլ Աղբալյանը: Նրա հասարակական-քաղաքական գործունեության սկիզբը համընկավ հայ իրականության հուզախռով ու փոթորկոտ այն դարաշրջանին, որպիսին Ի դարի առաջին տասնամյակներն են: Ճակատագրական իրողություններ էին հասունանում եւ ձեւավորվում այն տարածաշրջանում, ուր ապրում էին հայ ժողովրդի արեւելյան ու արեւմտյան հատվածները: Ն. Աղբալյանը եղավ այն եզակի հայ անհատներից մեկը, որն անմիջական եւ կարեւոր դերակատարություն ունեցավ այդ իրադարձությունների հորձանուտում:

Ծնվել է 1873 թ. ապրիլի 1-ին Թիֆլիսի Հավլաբար թաղամասում (թեեւ ծննդյան թվականի շուրջ կան նաեւ այլ կարծիքներ): Այնտեղ էլ ստացել է իր նախնական կրթությունը: Հայրն արհեստավոր էր, մայրը՝ տնային տնտեսուհի: 1892 թ. ավարտում է Ներսիսյան դպրոցի «լիակատար ընթացս ուսման վեցերորդ դասարանի»: Հենց Ներսիսյան կրթօջախում ուսումնառելու ընթացքում կատարում է գրական-ստաղծագործական առաջին փորձերը: Սակայն այդ փորձերը շուտով ընդհատվում են, քանզի իրեն բնավ չի պատկերացնում բանաստեղծի դերում կամ կարգավիճակում:

1892 թ. ընդունվում է Գեւորգյան հոգեւոր ճեմարան: Սակայն այնտեղ ուսումնառում է լոկ երկու տարի: Ստուգապես հայտնի չէ, թե ինչն է ուսման ընդհատման պատճառը՝ նյութական դժվարությունն՞ը, թե՞ հոգեւոր կոչման հեռանկարն է հիասթափեցրել նրան: Շրջանառվում է նաեւ այն կարծիքը, թե ճեմարանից հեռացել է ուսանողական ընդվզումներին մասնակցելու նպատակով:

Ինչեւէ, 1894 թ. ապրիլին ստանալով իր վկայագիրը՝ պատանին թողնում է ճեմարանական հաստատությունը եւ նվիրվում հասարակության լայն խավերի շրջանում լուսավորություն ու բարեկեցություն տարածելու գործին: Ճանապարհորդում է Արեւելյան Հայաստանի շուրջ երկու տասնյակից ավելի բնակավայրերում, ուսումնասիրում է հայ շինականների առօրյա կյանքն ու կենցաղը: Մի պահ նորից վերադառնում է Թիֆլիս, ապա անցնում մանկավարժական գործունեության:

1895—1896 թթ. ուսուցչությամբ է զբաղվում Ագուլիսի եւ Կաղզվանի դպրոցներում: Զուգահեռաբար զբաղվում է գրական գործունեությամբ՝ ընտրելով գրաքննադատության ոլորտը: 1896—1899 թթ. արդյունավետ կերպով աշխատակցում է «Մուրճ» ամսագրին: Այս տարիներին «Մուրճի» գրեթե յուրաքանչյուր համարում տպագրվում էին Աղբալյանի գրաքննադատական հոդվածները: Առաջին գրախոսականը տպագրվել է այդ հանդեսի 1896 թ. իններորդ համարում եւ նվիրված էր արդեն ճանաչված գրող Շիրվանզադեի «Կրակը» պատմվածքին:

Որպես գրականագետ ու գրականության տեսաբան՝ նա հասունություն ու ճանաչում է ձեռք բերում հենց այդ շրջանից: Նաեւ այդ տարիներից սկսվում են նրա մտերմությունն ու համագործակցությունը հայ իրականության մեջ գործող լավագույն գրողների եւ հրապարակախոսների հետ, որոնց առաջին շարքում էին Հովհ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, Լ. Շանթը, Լ. Մանվելյանը, Ավ. Իսահակյանը եւ ուրիշներ:

Պատանի հասակից նա աչքի է ընկնում մի զարմանալի եռանդուն աշխատասիրությամբ, ուսումնասիրում ոչ միայն հայ հեղինակներին, այլեւ ռուս եւ համաշխարհային գրականություն: Ուսումնասիրում է նաեւ ժողովուրդների տնտեսական կյանքի պատմությունը, որը նրա անհագ հետաքրքրությունների առաջնահերթություններից էր: Կյանքի տնտեսական կողմը կամ



տնտեսական գիտությունն ուսումնասիրելուն նրան մղում էր այն համոզմունքը, որ որեւէ հասարակություն զարգացնելու, առաջ մղելու համար հարկավոր էր ստեղծել բավարար նյութական պայմաններ եւ այն էլ՝ կարելվույն չափ բազմակողմանի ու բազմապիսի: Իր իսկ համոզմունքով՝ հայ իրականության մեջ բավարարվել են ժողովրդի մտավոր մակերեւույթը բարձրացնելու խնդրով՝ մոռանալով նրա տնտեսական կյանքի բարեկարգման հիմնահարցերը:

Արդեն պատանեկան տարիքից տնտեսագիտության վերաբերյալ իր խոհերն ու գիտելիքները փորձել է արմատավորել բուն կյանքում՝ սկսած շերամապահության գաղտնիքներից մինչեւ առավել լուրջ ծրագրերը:

Բայց, իհարկե, նա առաջին հերթին իրեն տեսնում եւ նախապատրաստվում էր ժողովրդի քաղաքական ազատագրության գործի համար պայքարողների շարքում: Հոգեկան այդ շարժառիթներով գործող երիտասարդ հայորդին ակտիվ արձագանքում էր ժամանակի բոլոր կարեւոր իրադարձություններին եւ ցուցաբերում սեփական վերաբերմունքը:

Քաղաքական կյանքին ու անցուդարձին մասնակցություն բերելու նրա լուրջ հայտը եղավ անդամակցությունը հայ իրականության ամենազորեղ քաղաքական կազմակերպությանը՝ Հայ հեղափոխական դաշնակցությանը, որի անդամը դարձավ 1904 թ.: Հենց այս կուսակցության շարքերում պիտի անցկացներ իր հետագա գիտակցական ողջ կյանքը՝ դառնալով նրա գաղափարական սյուներից մեկը: Սակայն ՀՅԴ-ին անդամակցությունը եւ շարքերում ակտիվ գործունեությունը նրա կյանքում ստեղծեցին նաեւ լուրջ անհարմարություններ ու վտանգներ: Ցարական հատուկ ծառայություններն իրենց տեսադաշտում առան Աղբալյանի գործունեությունը եւ հետապնդումներ սկսեցին: Այդ հետապնդումներից խուսանավելու նպատակով ստիպված էր հաճախ փոխել բնակության վայրը եւ որոշ չափով ընդհատակյա գործել:

Այսպես՝ 1909 թ. ոստիկանական հետապնդումներից խույս տալու նպատակով թողնում է Կովկասը եւ անցնում Թեհրան, որտեղ մնում է երեք տարի եւ վարում ազգային կրթական կյանքը ղեկավարող եւ ուղղորդող պաշտոններ:

Այդ տարիներին իր կուսակցության թելադրանքով կատարում է տարբեր հանձնարարականներ: Սակայն կուսակցական կյանքը երբեք նրան չի կտրում գրական-մշակութային միջավայրից: Բոլոր ժամանակներում էլ գրականությունը, գրական արժեքներն ու անցուդարձը մնում են նրա հոգեւոր տեսադաշտում, որքան էլ ծանրաբեռնված լիներ կուսակցական ու քաղաքական խնդիրներով ու առաջադրանքներով: Այնուամենայնիվ, 1910-ական թթ., երբ հայոց ազգային կյանքը մտավ սրընթաց իրադարձությունների հորձանուտ, Աղբալյանի նման գործիչները եւս հայտնվեցին այդ հեղեղատում:

Թեհրանից վերադառնալով հայրենիք՝ Նիկոլ Աղբալյանն անմիջապես ներգրավվում է ազգային-քաղաքական մեծ ու լրջագույն խնդիրների հոլովույթի մեջ: Ընտրվում է Ազգային ժամանակավոր բյուրոյի կազմում, որի անդամներն էին Ա. Խատիսյանը, Հ. Առաքելյանը, Ա. Քալանթարյանը, Ա. Պողոսյանը, Հովհ. Թումանյանը, Ս. Հարությունյանը: Որպես Թիֆլիսի Ազգային բյուրոյի անդամ՝ Ն. Աղբալյանը մասնակցում է այդ տարիներին հրավիրված համազգային նշանակությամբ բոլոր կարեւորագույն խորհրդակցություններին եւ ժողովներին:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին էլ ավելի է մեծանում նրա հասարակական հետաքրքրությունների եւ պարտավորությունների շրջանակը: Ն. Աղբալյանը դառնում է «Հորիզոնի» խմբագիրներից մեկը եւ աչքի ընկնող դեր կատարում այդ պարբերականի գործառույթներում: Գրում է ոչ միայն գրականագիտական հոդվածներ, այլեւ տեսական-քաղաքական բնույթի բազմաթիվ ակնարկներ: Այդ շրջանի «Հորիզոնի» բազմաթիվ առաջնորդողների հեղինակը նույնպես ինքն է (անստորագիր): Վերոնշյալ առաջնորդողներում եւ քաղաքական բնույթի հրապարակումներում քննության է առնում հայ ժողովրդի լայն զանգվածներին հուզող մի շարք խնդիրներ, որպիսիք էին Առաջին համաշխարհային պատերազմի ծագման պատճառները, մեծ պետությունների հակասություններն ու հակամարտությունները, հայ մտավորականության եւ հասարակական շրջանակների դիրքորոշումն ու վերաբերմունքը սկսված պատերազմի հանդեպ, ցարական Ռուսաստանի դիրքորոշումն ու նպատակները եւ այլ նման կարգի բազմաթիվ հարցեր եւ հարցականներ:

Պատերազմի ժամանակ նրա խմբագրությամբ լույս է տեսնում մի նոր պարբերական՝ «Նոր հոսանքը», որը դառնում է հայ մամուլի լավագույն ավանդույթների ժառանգորդը:

Առաջին աշխարհամարտը ճակատագրական փորձությունների առջեւ կանգնեցրեց հայ ժողովրդին: Ահեղ երկընտրանքի պահին Ն. Աղբալյանն արեւելահայ գործիչների մեծամասնության հետ պաշտպանում է կամավորական շարժման նախաձեռնությունը եւ դառնում այն ուղղորդող եւ ղեկավարող գործիչներից մեկը: «1914 թվից վարել եմ կամավորական գործը իբր կարգադրիչ հանձնաժողովի անդամ»,– գրել է ինքնակենսագրականում: Կամավորական շարժումը խանդավառեց համայն հայությանը եւ նոր հույսեր ու հեռանկարներ ծնեց: Բայց կամավորական շարժումը նաեւ նոր թշնամանք ու թշնամություն բերեց հայության գլխին: Այնտեղ՝ Արեւմտյան Հայաստանում, թուրքերն ավելի կատաղի կերպով սկսեցին բնաջնջել արեւմտահայերին, այստեղ՝ Կովկասում, ցարական ինշխանությունները սաստիկ վախեցան կամավորական շարժման ծավալումից եւ հայ ազգային ոգու բոցավառումից:

Նույնպես հարեւանները՝ վրացիներն ու կովկասյան թաթարները եւս սաստիկ անհանգստացել էին հայոց զինական ուժի փաստացի ձեւավորումից: Հատկապես անհանդուրժողական էր վրացական գործիչների վերաբերմունքը: «Կամավորական խնդրի ժամանակ նրանք չխնայեցին ոչ մի ջանք, որպեսզի արգելեն հայ կամավորական շարժումը»,– դառնորեն նշել է նա:

Ն. Աղբալյանը՝ որպես գաղափարական ու քաղաքական գործիչ, ուներ ռուսամետ կողմնորոշում՝ քաջ գիտակցելով, որ այդ պահին (Առաջին համաշխարհայինի ժամանակ) որեւէ այլ մոտեցում չէր կարող իրատեսական համարվել:

Ինչպես եւ Հովհ. Թումանյանը, Աղբալյանը նույնպես անմիջականորեն նկատել ու արձանագրել է, որ ցարական պաշտոնական իշխանությունների եւ բանակի հրամանատարության վերաբերմունքն արեւմտահայ ազգաբնակչության, հայ կամավորների նկատմամբ ամենեւին բարյացակամ չէ:

Աղբալյանը տեսավ ազատագրված Վանը եւ խանդավառվեց, որ ինն դար հետո այնտեղ հայկական իշխանություն է կազմավորվում: Մեծ էր հայության ոգեւորությունը ազատագրված Վանի կապակցությամբ: Ամենայն հայոց բանաստեղծը 1915 թ. հունիսին «Հորիզոնում» հրապարակած «Վան ու Երեւան» հոդվածում նախանշում եւ ազդարարում էր, որ մոտալուտ ապագայում Վան–Երեւան առանցքով կերտվելու է հայկական նորոգ պետականությունը: Աղբալյան հայորդին ու ազգային գործիչը նույնպես այդչափ ոգեւորված էր: Համընդհանուր այդ ոգեւորությունն զգացվում էր Աղբալյանի խմբագրած եւս մեկ պարբերականի՝ «Ռազմիկի» էջերում, որը հիմնադրվել էր 1917 թ. Թիֆլիսում:

Շարունակելի

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ՀՈՒԼԻՍ

† Պայծառակերպություն Հիսուս Քրիստոսի, Վարդավառ — *հուլիսի 16*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 6.07.2023 թ.
Տպաքանակը՝ 1265